

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵԲ-ԳԱՇՁԲ-21/66 >>

01 « Կոնկրետ » 2021 թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինմաստեր>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Բաղայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան հ.25 և Նանսենի հ. 17 շենքերի ջրահեռացման և խմելու ջրի համակարգերի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուս պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուս պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուսի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուսի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուս Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուս հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուսին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուսին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուսի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուսին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուս պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուսի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի

19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **28161012 (քսանութ միլիոն մեկ հարյուր վաթսուներեկ հազար տասներկու) ՀՀ դրամ, որից 4693502 (չորս միլիոն վեց հարյուր ինսուներեք հազար հինգ հարյուր երկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0,05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012000585
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



Կապալառու

«Շինմաստեր» ՍՊԸ
Ք. Երևան, Երզնկյան 22 շենք բն. 26
Ակբաբանկ ՓԲԸ
Հ/Հ 220553331582000
ՀՎՀՀ 08417768

Ռ. Բաղայան



ԾԱՎԱԼԹԵՐԹ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Լվովյան փող 25 շ /խմելու ջրի ներքին ցանց/

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեք (հազար դրամ)	Ընդհանուր արժեք (տոկոս)
1	2	3	4	5	6	7
Հողային աշխատանքներ						
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	մ	310,000	0,400	124,000	
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	40,300	6,000	241,800	
3	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	20,900	5,500	114,950	
4	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	2,300	9,000	20,700	
5	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում՝ բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	121,900	6,500	792,350	
6	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	13,500	15,000	202,500	
7	Խրամուղու մշակում VI կարգի գրունտներում էքսկավատորով, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	50,800	8,000	406,400	
8	Խրամուղու մշակում հարվածահար մուրճով, ձեռքով, VI կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	5,600	25,000	140,000	
9	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ ³	12,700	6,000	76,200	
10	Խրամուղու ետլիցք ավազով՝ տոփանումով	մ ³	202,200	6,000	1 213,200	
11	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	210,000	1,500	315,000	
12	Բիտումի տարածում 1000քմ-4,12տ բիտումի ծախսով	տ	0,870	300,000	261,000	
13	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	210,000	5,500	1 155,000	
14	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	210,000	4,000	840,000	
15	Բետոնե աստիճանների և	մ ³	8,900	20,000	178,000	

	հարթակների քանդում					
16	Բետոնե աստիճանների և հարթակների վերականգնում B15 դասի բետոնով	մ ³	8,900	40,000	356,000	
17	Բետոնե հենապատի քանդում ձեռքով	մ ³	1,100	20,000	22,000	
18	Բետոնե հենապատի վերականգնում B15 դասի բետոնով	մ ³	1,100	70,000	77,000	
19	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների քանդում	մ	24,500	1,000	24,500	
20	Քանդված աստիճանների տեղի բետոնե հարթեցնող շերտ՝ B7,5 դասի բետոնից	մ ³	0,620	35,000	21,700	
21	0,3x0,15մ չափերով նոր բազալտե աստիճանների տեղադրում	մ	24,500	20,000	490,000	
22	Անցքերի բացում պատերում	հատ	10	5,000	50,000	
23	Անցքերի փակում պատերում	մ ³	0,250	100,000	25,000	
24	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում	մ	9,000	1,000	9,000	
25	Գոյություն ունեցող եզրաքարերի տեղադրում	մ	3,000	4,000	12,000	
26	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում	մ	6,000	12,000	72,000	
27	Բետոնե ձևավոր սալիկների քանդում	100մ ²	0,150	50,000	7,500	
28	Քանդած բետոնե ձևավոր հին սալիկների վերականգնում,ավազե հիմքով	100մ ²	0,050	80,000	4,000	
29	6սմ հաստությամբ բետոնե ձևավոր սալիկների վերականգնում նոր սալիկներով,ավազե հիմքով	100մ ²	0,100	650,000	65,000	
30	Բազալտե սալիկների քանդում	մ ²	9,000	5,000	45,000	
31	Բազալտե սալիկների վերականգնում նոր նյութով,հ=3սմ	մ ²	9,000	18,000	162,000	
	Ընդամենը				7 523,800	59,20%
Բնակարաններում քանդման և վերականգնման աշխատանքներ						
1	Փայտե, լամինատե, մարմարե, կերոմոգրանիտե, խեցեսալերով, մանրատախտակե հատակների քանդում	մ ²	150,000	0,500	75,000	
2	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ	մ ²	150,000	1,000	150,000	
3	Շինաղբի մաքրում և դուրս բերում շինությունից	տ	18,000	2,500	45,000	
4	Շինաղբի ձեռքով բարձում ա/հիքնաթափի վրա	տ	18,000	1,000	18,000	
5	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	18,000	2,500	45,000	
6	Բետոնե հարթաշերտ H=50մմ B7,5 (M100) դասի բետոնից	մ ²	150,000	2,500	375,000	
7	Ցեմենտավազե հարթաշերտ H=20մմ	մ ²	150,000	1,000	150,000	
8	Հատակների երեսպատում խեցեսալիկներով, ցեմենտե հիմքով	մ ²	25,000	7,000	175,000	

	միասին					
9	Հատակների երեսպատում կերոմոգրանիտ սալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով	մ ²	25,000	20,000	500,000	
10	Շրիշակներ կերոմոգրանիտ սալիկներից H=10սմ, ցեմենտե հիմքով սոսնձանյութով	մ ²	3,000	15,000	45,000	
11	Փայտյա հատակների կառուցում 50մմ հաստ.	մ ²	25,000	10,000	250,000	
12	Փայտյա շրիշակների տեղադրում	մ	15,000	1,000	15,000	
13	Փայտյա հատակների հղկաթղթում բարձր որակի	մ ²	25,000	1,500	37,500	
14	Լամինատե հատակների կառուցում/ներառյալ շրիշակը և սպունգը/ 8մմ հաստ.	մ ²	25,000	7,000	175,000	
15	Մանրատախտակե հատակների կառուցում շրիշակների տեղադրմամբ	մ ²	25,000	8,000	200,000	
16	Մանրատախտակե հատակների հղկում	մ ²	25,000	1,500	37,500	
17	Մանրատախտակե հատակների երկշերտ լաքապատում, ներառյալ շրիշակները (անփայլ)	մ ²	25,000	0,600	15,000	
18	Մարմարե հատակների կառուցում	մ ²	25,000	40,000	1 000,000	
	Ընդամենը				3 308,000	26,03%

Տեխնոլոգիական աշխատանքներ

1	Պողպատե խողովակի կտրում Ø80	տեղ	1	1,000	1,000	
2	Պողպատե (St) էլ/եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN89x3,5մմ, փորձարկումով	մ	5,000	6,000	30,000	
3	Պողպատե (St) էլ/եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN65x3,5մմ, փորձարկումով	մ	2,000	4,000	8,000	
4	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de90, PN=1.0 ՄՊա, փորձարկումով	մ	20,000	2,500	50,000	
5	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de75, PN=1.0 ՄՊա, փորձարկումով	մ	68,000	1,800	122,400	
6	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de63, PN=1.0 ՄՊա, փորձարկումով	մ	35,000	1,300	45,500	
7	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de50, PN=1.0 ՄՊա, փորձարկումով	մ	45,000	0,800	36,000	
8	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de40, PN=1.0 ՄՊա, փորձարկումով	մ	116,000	0,600	69,600	

9	Պոլիէթիլեն (PE) de90 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,020	150,000	3,000	
10	Պոլիէթիլեն (PE) de75, de63, 50, 40 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,264	150,000	39,600	
11	Պոլիէթիլեն խողովակների անցումային ձևավոր մասեր de90, de75	հատ	7	15,000	105,000	
12	Պոլիէթիլեն խողովակների անցումային ձևավոր մասեր de63, de50, 40	հատ	10	8,000	80,000	
13	Պոլիէթիլեն խողովակների ձևավոր մասեր de63	հատ	1	7,000	7,000	
14	Պողպատ-պոլիթիլեն կցորդիչ Ø32/40	հատ	14	5,000	70,000	
15	Գոյություն ունեցող Ø32 մետաղական մուտքագծերի կտրում	տեղ	14	1,000	14,000	
16	Գոյություն ունեցող Ø32 մետաղական մուտքագծերի վրա պարուրակի ստեղծում	տեղ	14	1,000	14,000	
17	Սեպավոր փական DN80, PN=1.0 ՄՊա	հատ	2	50,000	100,000	
18	Սեպավոր փական DN65, PN=1.0 ՄՊա	հատ	1	40,000	40,000	
19	Բազմաշիթ ջրաչափ DN80, PN=1.0 ՄՊա	հատ	1	100,000	100,000	
20	Ջրի ֆիլտր DN80, PN=1.0 ՄՊա	հատ	1	50,000	50,000	
21	Պողպատե կցաշուրթ DN80, PN=1.0 ՄՊա	հատ	7	8,000	56,000	
22	Պողպատե ազատ կցաշուրթ DN80, PN=1.0 ՄՊա	հատ	1	6,000	6,000	
23	Պողպատե կցաշուրթ DN65, PN=1.0 ՄՊա	հատ	3	7,000	21,000	
24	Պողպատե ազատ կցաշուրթ DN65, PN=1.0 ՄՊա	հատ	1	6,000	6,000	
25	Պոլիէթիլեն միջադիր de90, PN=1.0 ՄՊա	հատ	1	6,000	6,000	
26	Պոլիէթիլեն միջադիր de75, PN=1.0 ՄՊա	հատ	1	4,000	4,000	
27	Պողպատե խողովակի ձևավոր մասեր	կգ	1,100	2,000	2,200	
28	Մեխանիկական մանուետր, DN15	հատ	1	7,000	7,000	
29	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ ²	2,000	0,800	1,600	
30	Պողպատե պատյան խողովակների տեղադրում հորերում	կգ	3,000	1,000	3,000	
31	Փականի տակդիր DN100 խողովակից և 0.15x0.15x0.004մ մետ. թիթեղից -6,5կգ	կգ	32,500	2,000	65,000	
32	Ø80/DN80 պողպատե խողովակների միացում էլ. եռակցմամբ	տեղ	1	5,000	5,000	
					1 167,900	9,19%
Ընդամենը						
Երկաթբետոնե հավաքովի կլոր հորի շինարարական աշխատանքներ D=2,0, H=1,8մ						

1	Յ7.5 բետոնի նախապատրաստական շերտի ստեղծում h=10սմ հաստությամբ	մ ³	0,700	40,000	28,000	
2	Յեմենտ/ավազային շաղախ M100 մակնիշի	մ ³	0,020	40,000	0,800	
3	D=2.0մ H=1,8մ ե/բ հավաքովի հորի մոնտաժային աշխատանքների իրականացում (հիմքի սալ, պատի օղակ, ծածկի սալ, մետաղ. ելարան, ներդիր տարրեր)	մ ³	1,800	40,000	72,000	
4	D=2.0մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ ՀՍ-20 տիպի	հատ	1	110,000	110,000	
5	Պատի օղակ ՊՕ-20-9	հատ	2	130,000	260,000	
6	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ԾՍՍ1-20 տիպի թուջե մտոցով	հատ	1	220,000	220,000	
7	Մետաղական ելարան	տ	0,018	800,000	14,400	
8	Ներդիր տարրեր	կգ	6,100	0,800	4,880	
	Ընդամենը				710,080	5,59%
	Ընդամենը				12 709,780	100,00%
	ԱԱՀ 20%				2 541,956	
	Ընդամենը				15 251,736	

1-ին զանգված, Նանսենի 17 շենք /խմելու ջրի ներքին ցանց

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (հազար դրամ)	Ընդհանուր արժեք (հազար դրամ)	Ընդհանուր արժեք (տոկոս)
1	2	3	4	5	6	7
	Հողային աշխատանքներ					
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	մ	200,000	0,400	80,000	
2	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատորով, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	25,000	6,000	150,000	
3	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	17,800	5,500	97,900	
4	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում, բարձում ա/մ և տեղափոխելով 13կմ	մ ³	2,000	9,000	18,000	
5	Խրամուղու և փոսորակի մշակում էքսկավատորով V կարգի գրունտներում բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	104,000	6,500	676,000	
6	Խրամուղու և փոսորակի մշակում ձեռքով V կարգի գրունտներում, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	11,500	15,000	172,500	
7	Խրամուղու մշակում VI կարգի գրունտներում էքսկավատորով, բարձելով ա/մ տեղափոխելով 13 կմ	մ ³	43,200	8,000	345,600	
8	Խրամուղու մշակում հարվածահար մուրճով, ձեռքով, VI կարգի գրունտներում, բարձում ա/մ և	մ ³	4,800	25,000	120,000	

	տեղափոխելով 13կմ					
9	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ ³	11,000	6,000	66,000	
10	Խրամուղու ետլիցք ավազով՝ տոփանումով	մ ³	172,000	6,000	1 032,000	
11	Խճի նախաշերտ h=15սմ	մ ²	140,000	1,500	210,000	
12	Քիտումի տարածում 1000քմ-4,12տ քիտումի ծախսով	տ	0,580	300,000	174,000	
13	Ծածկույթի պատրաստում խոշորահատիկ ասֆալտբետոնից 6սմ հաստությամբ	մ ²	140,000	5,500	770,000	
14	Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնից 4սմ հաստությամբ	մ ²	140,000	4,000	560,000	
15	Բետոնե աստիճանների և հարթակների քանդում	մ ³	8,000	20,000	160,000	
16	Բետոնե աստիճանների և հարթակների վերականգնում B15 դասի բետոնով	մ ³	8,000	40,000	320,000	
17	Բետոնե հենապատի քանդում ձեռքով	մ ³	0,500	20,000	10,000	
18	Բետոնե հենապատի վերականգնում B15 դասի բետոնով	մ ³	0,500	70,000	35,000	
19	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների քանդում	մ	7,000	1,000	7,000	
20	Քանդված աստիճանների տեղի բետոնե հարթեցնող շերտ՝ B7,5 դասի բետոնից	մ ³	0,200	35,000	7,000	
21	0,3x0,15մ չափերով նոր բազալտե աստիճանների տեղադրում	մ	7,000	20,000	140,000	
22	Անցքերի բացում պատերում	հատ	9	5,000	45,000	
23	Անցքերի փակում պատերում	մ ³	0,240	100,000	24,000	
24	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի քանդում	մ	12,000	1,000	12,000	
25	Գոյություն ունեցող եզրաքարերի տեղադրում	մ	4,000	4,000	16,000	
26	Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում	մ	8,000	12,000	96,000	
27	Բետոնե ձևավոր սալիկների քանդում	100մ ²	0,150	50,000	7,500	
28	Քանդած բետոնե ձևավոր հին սալիկների վերականգնում,ավազե հիմքով	100մ ²	0,050	80,000	4,000	
29	6սմ հաստությամբ բետոնե ձևավոր սալիկների վերականգնում նոր սալիկներով,ավազե հիմքով	100մ ²	0,100	650,000	65,000	
30	Բազալտե սալիկների քանդում	մ ²	12,000	5,000	60,000	
31	Բազալտե սալիկների վերականգնում նոր նյութով,h=3սմ	մ ²	12,000	18,000	216,000	
	Ընդամենը՝				5 696,500	52,95%
	Բնակարաններում քանդման և վերականգնման աշխատանքներ					
1	Փայտե, լամինատե, մարմարե, կերոմոգրանիտե, խեցե սալերով, մանրատախտակե հատակների	մ ²	150,000	0,500	75,000	

2	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ	մ ²	150,000	1,000	150,000	
3	Շինաղբի մաքրում և դուրս բերում շինությունից	տ	18,000	2,500	45,000	
4	Շինաղբի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա	տ	18,000	1,000	18,000	
5	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	18,000	2,500	45,000	
6	Բետոնե հարթաշերտ H=50մմ B7,5 (M100) դասի բետոնից	մ ²	150,000	2,500	375,000	
7	Ցեմենտավազե հարթաշերտ H=20մմ	մ ²	150,000	1,000	150,000	
8	Հատակների երեսպատում խեցեալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով շրիշակների հետ միասին	մ ²	25,000	7,000	175,000	
9	Հատակների երեսպատում կերոմոգրանիտե սալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով	մ ²	25,000	20,000	500,000	
10	Շրիշակներ կերոմոգրանիտե սալիկներից H=10սմ, ցեմենտե հիմքով սոսնձանյութով	մ ²	3,000	15,000	45,000	
11	Փայտյա հատակների կառուցում 50մմ հաստ.	մ ²	25,000	10,000	250,000	
12	Փայտյա շրիշակների տեղադրում	մ	15,000	1,000	15,000	
13	Փայտյա հատակների հղկաթղթում բարձր որակի	մ ²	25,000	1,500	37,500	
14	Լամինատե հատակների կառուցում/ներառյալ շրիշակը և սպունգը/ 8մմ հաստ.	մ ²	25,000	7,000	175,000	
15	Մանրատախտակե հատակների կառուցում շրիշակների տեղադրմամբ	մ ²	25,000	8,000	200,000	
16	Մանրատախտակե հատակների հղկում	մ ²	25,000	1,500	37,500	
17	Մանրատախտակե հատակների երկշերտ լաքապատում, ներառյալ շրիշակները (անփայլ)	մ ²	25,000	0,600	15,000	
18	Մարմարե հատակների կառուցում	մ ²	25,000	40,000	1 000,000	
	Ընդամենը՝				3 308,000	30,75%
Տեխնոլոգիական աշխատանքներ						
1	Պողպատե խողովակի կտրում Ø80	տեղ	1	1,000	1,000	
2	Պողպատե (St) էլ/եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN89x3,5մմ, փորձարկումով	մ	5,000	6,000	30,000	
3	Պողպատե (St) էլ/եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում DN57x3,5մմ, փորձարկումով	մ	2,000	4,000	8,000	
